ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (IRZ)՝ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳԻՐԸ

13.09.2016 17:51

2016 թվականի սեպտեմբերին Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը մեկնարկել են համատեղ ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է շարունակական վերապատրաստման դասընթացներ անցկացնել մարզերի փաստաբանների համար:

Նշված նախաձեռնության շրջանակներում առաջին վերապատրաստման դասընթացները «***Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա***» թեմայով **Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզի փաստաբանների համար** անցկացվեցին 2016 թվականի սեպտեմբերի 10-ին, 12-ին և 13-ին՝ Գյումրի և Դիլիջան քաղաքներում:

Վերապատրաստման դասընթացները վարել են **Մյունխենից հրավիրված փորձագետ՝ փաստաբան, դոկտոր Թոմաս Նափերթը** և **տեղացի փորձագետ՝ փաստաբան Տիգրան Սաֆարյանը:**

Դասընթացներին դոկտոր Նափերթը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մասին ընդհանուր տեղեկությունները՝ կառուցվածքային և կազմակերպական առանձնահատկությունները և դատարանում գործերի քննության առանձնահատկությունները:
Թոմաս Նափերթը փաստաբաններին ներկայացրել է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ և 6 (3) հոդվածների վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան, ինչպես նաև փաստաբանների հետ քննարկել է նշված նորմերի վերաբերյալ իրավիճակային խնդիրներ:
Փաստաբան Տիգրան Սաֆարյանը խոսել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ընդդեմ Հայաստանի քննվող գործերի մասին՝ ներկայացնելով դրանց քննության վերաբերյալ վիճակագրական տվյալները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչության գործունեության առանձնահատկությունները:

Վերապատրաստման երեք դասընթացներին մասնակցել են Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի ութսուներկու փաստաբան:

Նշենք նաև, որ ՀՀ փաստաբանների պալատի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) ակտիվ համագործակցությունը սկսել է 2014 թվականից: Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) ստեղծվել է 1992 թվականին Գերմանիայի արդարադատության նախարարության նախաձեռնությամբ՝ որպես եվրոպական և հետխորհրդային պետություններին իրավական հարցերով փորձագիտական խորհրդատվություն տրամադրող կառույց: Ներկայումս Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) հայաստանյան ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրում երկու ուղղություններով՝ օրենսդրության զարգացման և կատարելագործման, ինչպես նաև իրավական ոլորտի տարբեր շահառուների (դատավորներ, փաստաբաններ, նոտարներ, ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների դասախոսական կազմ և ուսանողներ, ինչպես նաև այլ ոլորտներում գործունեություն իրականացնող երիտասարդ իրավաբաններ) համար գերմանացի փորձագետների միջոցով որակավորման բարձրացման դասընթացներ կազմակերպելու ուղղություններով:

Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) 22.08.2016 թվականին ՀՀ փաստաբանների

պալատի խորհրդի կողմից մեկ տարի ժամկետով հավատարմագրվել է նաև որպես փաստաբանների վերապատրաստում իրականացնող կազմակերպություն:

IRZ



Nelli Harutyunyan
Tigran Safaryan

IRZ

Առաջարկվող նորություններ

17.09.2013ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

09.10.2013ԱՎԱՐՏՎԵՑ «ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

03.12.2013ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ

13.01.20142014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍՎԱ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })